«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Ֆրանգյան Հերմինե

Դպրոց՝ Տանձուտի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան

ԱՐՄԱՎԻՐ- 2023

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Հետազոտության կառուցվածքը և բովանդակային բաղադրիչները

1. Ներածություն / նախաբան/

2. Համատեքստ և գրականության ակնարկ

3 . Ամփոփում /եզրակացություն/

4. Գրականության ցանկ

Ներածություն

«Ուրիշներին սովորեցնելու համար պահանջվում է ավելի շատ իմացություն և խելք, քան երբ ինքդ ես սովորում»:

Մ. Մոնտեն

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:
«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձին ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործը ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝

- ժողովրդագրական
- ազգային
- մշակութային
- ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական, պատմական հերոսների օրինակով, նաև ուսուցչի վարքագծով: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Օրինակ 4-րդ դասարանի դասագրքի «Օշականյան հյուրընկալություն» տեքստն ընթերցելուց հետո աշակերտները պետք է բնութագրեն հեղինակին, լեհ լրագրողին, նրանց հյուրընկալող հայ գյուղացիներին: Աշակերտներին հարց է ուղղվում՝ ինչը դուր եկավ, ինչը դուր չեկավ: Եվ նա ազատ է իր կարծիքը հայտնելու:. Չի բացառվում, որ ոմանք բացասական գծեր տեսնեն լրագրողի, նրա հայ ուղեկցի, նույիսկ հայ գեղջկուհու նկարագրի մեջ: Մյուս կարևոր սկզբունքը այն է , որ պետք է սովորել ոչ թե լսելով, այլ կիրառելով: Ուստի պետք է նրանց հնարավորություն տալ կիրառելու իրենց սովորած արժեքը, այն ձեռք բերել իրենց իսկ փորձառության հիման վրա: Դրա համար, անշուշտ, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր, որոնք համապատասխանում են երեխաների տարիքին:

Շատ կարևոր է նաև խրախուսանքը: Խրախուսելով երեխային կարելի է ոգեշնչել, մղել որոշակի գործողությունների, ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ամրապնդմանը: Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակային բաղադրատարրը բնութագրվում է մայրենի լեզվի առանձնահատկություններով:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից մենք դիտարկում ենք այն արժեքները, որոնք դրսևորվում են՝

- Լեզվի գործառույթներում
- Տարրական դպրոցում լեզվի ուսուցման նպատակներում:

Լեզվի հիմնական գործառույթներն են՝ հաղորդակցական, ճանաչողական, տեղեկատվական, ներազդման, ազգային-մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման, մտքերի ձևավորման ու արտահայտման, հուզական և այլն:: Հաղորդակցական գործառույթը ենթադրում է խոսքային հաղորդակցում: Տարրական ուսուցման համակարգում այս գործառույթի իրականացումը նշանակում է մեր կողմից ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ այնպիսի արժեքների դիտարկում, որոնք արտահայտվում են փոխադարձ շփման, բարեկիրթ հաղորդակցման ընթացքում: Շփման ու հաղորդակցման արժեքային կողմը բնութագրում է մարդու՝ այլոց հետ համակեցության, մարդկանց հետ շփվելու պահանջմունքը: Հաղորդակցական կարողության դրսևորումն այն է, որ կրտսեր դպրոցականը կարողանում է լսել, ընկալել, բանավիճել, համարժեք վերաբերմունք արտահայտել և տրամաբանված խոսք կառուցել:

Ըստ Վ. Ս. Լեդնևի՝ ուսումնական յուրաքանչյուր առարկա զարգացնում է աշակերտի անձի որևէ կողմը, հետևաբար ուսումնական առարկաների հուզական արժեքային բաղադրատարրի բովանդակությունը տարբեր է՝ ըստ դրանց դերի և գործառույթների: Այս տեսանկյունից հետազոտողների կողմից առաջարկվել են ուսումնական առարկաների դասակարգումներ՝ ըստ դրանց դերի և գործառույթների: Մայրենի և օտար լեզուների ուսումնական առարկաներում, ըստ Վ.Ս.Լեդնևի, առանձնացվում են հաղորդակցման գեղագիտական կողմերը՝ ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական տեքստերի հիման վրա: Չնայած դասակարգման տարբեր մոտեցումներին՝ հետազոտողները միասնական են այն հարցում, որ լեզուների բնագավառի առարկաներն իրականացնում են տարբեր գործառույթներ: Այսինքն՝ այդ առարկաներից ուրաքանչյուրը անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման տեսանկյունից ունի իր

առանձնահատկությունները: Տարրական դպրոցում լեզուների ուսուցման կառուցվածքն ու բովանդակությունը միասնական են: Դա թույլ է տալիս եզրակացնել, որ լեզուների ուսուցումն աստեղ ինտեգրվող համակարգ է: Այսպես, օրինակ, մայրենի լեզվի դասն ինտեգրվում է գեղարվեստական ընթերցանության դասի հետ՝ ուսումնական ձեռնարկներում գեղարվեստական տեքստերի ներմուծմամբ: Գեղարվեստական տեքստերի բովանդակության ներգործությունը կրտսեր դպրոցականի ներաշխարհի վրա պատկերավոր մտածողության և հուզական ընկալման շնորհիվ համարժեք է քերականական առաջադրանքների կատարմանը: Ընթերցանության դասերի ընթացքում ձևավորվում են սովորողների լեզվական ճաշակն ու խոսքային մշակույթը: Ընթերցանության տեքստերը մեծ հնարավորություն են ընձեռում դպրոցականի բառապաշարի հարստացման համար: Դա արտահայտվում է նրա գրավոր և բանավոր խոսքի մեջ, զրույցներում, գրավոր աշխատանքի տարբեր տեսակներում: Այսպիսով՝ տարրական դպրոցում լեզուների բնագավառի ուսումնական առարկաներից յուրաքանչյուրն ունի մի քանի գործառույթ՝

1. Տվյալ լեզվի տեսական հիմունքների ուսումնասիրում
2. Խոսքային գործունեության իրականացում
3. Իրականության նկատմամբ գեղագիտական և բարոյական հարաբերությունների ձևավորում՝ գեղարվեստական խոսքի միջոցով:

Այս գործառույթներից յուրաքանչյուրն ունի որոշակի արժեքային ներուժ, որը բացահայտում է սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնական ուղղությունները: Լեզվական գործունեության իրականացման գործառույթը նպաստում է հաղորդակցական արժեքի ձևավորմանը, որն ընդգրկվում է սոցիալական արժեքների խմբում: Իրկանության նկատմամբ գեղագիտական և բարոյական հարաբերությունների ձևավորման գործառույթն ուղղված է բարոյական և գեղագիտական արժեքների ձևավորմանը, ինչպես նաև անձի՝ շփման և հաղորդակցման սոցիալական արժեքների ձևավորմանը: Դպրոցական ուսուցման համակարգում ուսումնական առարկաների գործառույթները միավորվում են որոշակի նպատակներով: Քանի որ տարրական

դպրոցում լեզուների ուսուցումն իրականանում է մի քանի առարկաների միջոցով, դրանց նպատակները և՛ մանկավարժական և՛ մեթոդական հետազոտություններում միասնաբար են ներկայացվում: Մեթոդամանկավարժական գրականության մեջ լեզուների ուսուցման նպատակների ձևակերպման ժամանակ հիմնական ուշադրությունը հատկացվում է լեզվի գործնական-ճանաչողական կողմի յուրացմանը և դրա հիման վրա՝ լեզվի տիրապետմանը:

Լեզուն յուրացնել նշանակում է ապահովել իմացություն հետևյալ ոլորտներում՝

1. Լեզվական
2. Ուղղագրական-ուղղախոսական
3. Լեզվաբանական
4. Հաղորդակցական

   Կրտսեր դպրոցականների զարգացման իմացական-ճանաչողական և հաղորդակցական գործունեությունը նպաստում է նրանց իմացական ու սոցիալական արժեքների ձևավորմանը, իսկ բարոյական ու գեղագիտական արժեները հիմնականում ձևավորվում են ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական նյութերի ուսուցման ընթացքում: Ընդհանուր առմամբ արժեքային համակարգի ձևավորումը երեխաների մոտ, նպատակ ունի ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

   1. Գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի , ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:
   2. Հարգի Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:
   3. Գիտակցի, որ գիտությունը , արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:
   4. Գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են

5. գիտելիքները, աշխատանքային հմտությունները:

6. Կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը:
7. Դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը:

Այժմ փորձենք հետազոտության միջոցով ցույց տալ, թե ինչպես պլանավորել ամփոփման դասը՝ կիրառելով փոխներգործուն մեթոդները, որոնք ուղղված կլինեն աշակերտների արժեքային համակարգի ձևավորմանը:

Մայրենիի դասագրքի որևէ թեմատիկ խմբի ամփոփման դասի բովանդակության ներկայացում կրտսեր դպրոցականների արժեհամակարգի, համոզմունքների և վարվելակերպի հնարավորությունների տեսանկյունից, մեծն մանկավարժ Մակարենկոն գրում է, որ դաստիարակության համար ոչ թե շատ ժամանակ է պետք, այլ քիչ ժամանակի խելացի օգտագործում: Նույնը կարելի է ասել նաև ուսուցման մասին: Ուսուցման հիմնական օղակը դասն է: Դրա ամեն մի րոպեն խելացի, մտածված ու արդյունավետ պետք է օգտագործել: Ժամանակակից դասերը պետք է միօրինակ չլինեն:

- Յուրաքանչյուր դաս մանկավարժական ուրույն ստեղծագործություն է և չի կարող նույնությամբ կրկնվել: Ուստի մենք՝ ուսուցիչներս, դասը պետք է դարձնենք բազմաբնույթ և ստանանք դրական ադյունք: Մանկավարժության մեջ տարածված կարծիքի համաձայն՝ ուսուցումը պետք է ունենա ստեղծագործական - հետազոտական ուղղվածություն: Վերջին տարիներին ուսուցման գործընթաց են մտել փոխներգործուն մեթոները: Դրանք մեծապես նպաստում են աշակերտների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացը հետաքրքիր և աշխույժ դարձնելու պայմանների ստեղծմանը: Աշակերտներն այս դեպքում պասիվ ընկալողից վերաճում են հայտնագործողի և գիտելիքների ձեռքբերման գործընթացի ակտիվ մասնակցի:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Այսինքն այս մեթոդներն ուսուցմանը հաղորդում են ստեղծագործական-հետազոտական բնույթ: Փոխներգործուն մեթոդն ակնառու է խմբային աշխատանքի կիրառման ժամանակ, որն ավելի հաճախակի է կիրառվում ամփոփման դասերի ժամանակ և ոչ միայն: Փոխներգործուն ուսուցումն առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման ,սովորողների ազատության վրա: Ստորև ներկայացնում եմ 4-րդ դասարանի դասգրքից «Ժողովրդական բանահյուսություն» թեմայի ամփոփման դասը, որն անց եմ կացրել ԽԻԿ համակարգով, կիրառել եմ փոխներգործուն մեթոդներ, խաղեր, որոնք ակտիվացնում են աշակերտներին: Ինչպես գիտենք, յուրաքանչյուր դասի արդյունավետության բարձրացման կարևոր գործոն է դասի ճիշտ պլանավորումը, իսկ ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է դասի նպատակների և խնդիրների հստակ ձևակերպում: Այն ենթադրում է պատասխանել հետևյալ հարցերին՝
Ի՞նչ սովորեցնել, Ինչո՞ւ սովորեցնել, Ինչպե՞ս սովորեցնել:
ԽԻԿ համակարգի առաջին փուլը խթանումն է: Այս փուլի նպատակն է աշակերտների հետաքրքրությունը խթանել, նպաստել, որ նրանք խորհեն նոր հաղորդվելիք թեմայի մասին , վեր հանել թեմային առնչվող նրանց նախնական գիտելիքները, հարցեր տալ և սահմանել սովորելու կոնկրետ նպատակները: Դրան հաջորդում է իմաստի ընկալման փուլը, որի ընթացքում աշակերտները տեքստի, ուսուցչի հաղորդման կամ ուսումնական որևէ այլ միջոցով ծանոթանում են նոր նյութին, և այդ ընթացքում նրանցից ակնկալվում է , որ կարողանան նոր տեղեկությունները, գաղափարները կամ բովանդակությունը ներհյուսել իրենց սեփական , արդեն գոյություն ունեցող պատկերացումների մեջ: Ավարտվում է կշռադատման փուլով, որի ընթացքում աշակերտներն իրենց ունեցած պատկերացումների համատեքստում խորհում են սովորածի մասին՝ վերակառուցելով իրենց գիտելիքները:

Ստորև ներկայացնում եմ «Ժողովրդական բանահյուսություն» թեման,

որի ամփոփման համար սահմանել եմ հետևյալ նպատակները.

1. Ամփոփել ժողովրդական բանահյուսության վերաբերյալ ստացած գիտելիքները:
2. Զարգացնել աշակերտների իրականության հանդեպ փաստերն ու երևույթները ճիշտ ընկալելու և իրենց վերաբերմունքն արտահայտելու կարողություն:
3. Ներկայացնել առակի անուղղակի իմաստի առաջադրումը:
4. Խոսքն օգտագործել որպես մտածողության ակտիվացման միջոց:
5. Զևավորել գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու, գնահատելու կարողություն, ինքնուրույն աշխատանքով հետաքրքրությունները բավարարելու ձգտում:

Դասը սկսել եմ խթանման փուլով, նախքան թեմատիկ խմբի ամփոփմանն անցնելը՝ անդրադարձել եմ առանձին ստեղծագործությունների՝ դրանց բովանդակությունը վերհիշելու, հիմնական միտքը նորովի ձևակերպելու, բառապաշարը ակտիվացնելու նպատակով: Սովորողներին բաժանել եմ 4-5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբի տրվել է մեկ աղյուսակ (աղ. 1)՝ թեմատիկ խմբի ստեղծագործությունների թվով տողերով: Աղյուսակ 1. Վերնագիր «Արջն ու օձը», Գլխավոր հերոսներ /օձ,արջ/ , Բովանդակությունը մեկ նախադասությամբ /Արջը, չհավանելով օձի գաղտագողի սողքը, սպանեց նրան, Առակը սովորեցնում է /Ընկեր ընտրիր առանց շտապելու:Ընկերությունը պետք է լինի առանց կասկածի ու վախի/, Բանալի բառեր և արտահայտություններ /ընկեր, ազնիվ, գաղտագողի սողալ, մռթմռթալ/ : Խմբերը, օգտվելով դասագրքից, լրացրել են աղյուսակը, որն իրենց պետք է գալու մյուս աշխատանքների ժամանակ: Աշակերտները թվարկեցին թեմատիկ խմբում ընդգրկված դասանյութերը և կատարվեց հարցադրում:

Ուս. Ո՞ր ժանրին են պատկանում այս ստեղծագործությունները: Հարց ու պատասխանի ձևով ներկայացրել են , թե ինչ է առակը, ինչ է ներկայացվում 4 առակներում, թվեցին ծանոթ առակագիրներին և ներկայացրին իրենց ստեղծագործությունները:

Աշ.- Առակը ուսուցողական, բարոյախրատական դաստիարակչական, փոքրածավալ ստեղծագործություն է կենդանիների, բույսերի և մարդկանց մասին: Աշ.- Նրանցում բույսերը և կենդանիները խոսում են մարդկային լեզվով, կատարում մարդուն բնորոշ

արարքներ: Աշ. - Առակները լինում են արձակ և չափածո: Այն բաղկացած է երկու մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից:

Ուս. – Ի՞նչ է ներկայացվում առակներում:

Աշ.- Առակներում ծաղրվում են մարդկային վատ հատկանիշները՝ չարությունը, պարծենկոտությունը , մեծամտությունը և այլն: Գովաբանվում են լավ արարքները, ինչպիսիք են բարությունը , ազնվությունը:



Ուս. – Առակագիրներից ու՞մ կարող եք հիշել:

Աշ. – Եզոպոս, Վարդան Այգեկցի, Մխիթար Գոշ, Աթաբեկ Խնկոյան:

Իմաստի ընկալումը սկսել եմ հետևյալ խաղով. Կպչուն թղթերի վրա գրված են թեմատիկ խմբի շրջանակներում ուսումնասիրված առակների հերոսների անունները:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ Թղթերը փակցվում են աշակերտների ճակատին: Քանի որ խաղացողը չի տեսնում իր անունը , դիմում է մյուսների օգնությանը՝ պարզելով իր ով լինելը: Հարցերը պետք է լինեն ընդհանուր բնույթի, չպարունակեն անուններ: Հարցերին պետք է պատասխանեն «այո» կամ «ոչ»: Այսպես «հերոսը» պետք է բացահայտի ինքն իրեն և զբաղեցնի իր տեղը համապատասխան խմբում:

Կազմակերպել եմ նաև այսպիսի առաջադրանք Աթաբեկ խնկոյանի «Ճպուռն ու մրջյունը» առակի շուրջ: Բաժանել եմ խմբերի և յուրաքանչյուր խմբի հանձնարարել եմ հետևյալ աշխատանքը. 1-ին խ. Նկարագրել առակի հերոսներին: Նշել առակի հիմնական միտքը: Առակը հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել ընկերասիրություն, հանդուրժողականություն: 2-րդ խ. Դերերով ընթերցել առակը: Աշակերտներին ծանոթ է կարդալու այս տեսակը, քանի որ արդեն իսկ իրականացրել եմ այն առակի ուսուցման ժամանակ: Դերերով ընթերցելիս պետք է անպայման պահպանել հետևյալ կանոնները՝ դերերի բաշխումը կատարել աշակերտների ցանկությամբ, որևէ դեր չպարտադրել, եթե աշակերտը չի կամենում այն կատարել, երբեք երեխաներին չնմանեցնել հերոսներին:

3-րդ խ. Դասը ներկայացնում է ընտրովի ընթերցանությամբ, որի ընթացքում տրվում են հետևյալ հարցերը.

1. Ընտրել և ընթերցել ձեզ դուր եկած տողերը:
2. Ընթերցել այն տողերը, որոնցում նկարագրվում են ճպուռի ամառային օրերը:
3. Ի՞նչպիսի՞ն է ճպուռը, մրջյունը:
4. Ընթերցել այն տողերը, որոնցում նկարագրվում է ձմեռային բնությունը:

Աշխատանքը ավարտելուց հետո աշակերտները դուրս բերեցին առակի հիմնական գաղափարը, այն է՝ աշխատասիրությունը ընդունելի և գովելի է, իսկ ծուլությունը՝ անընդունելի ու դատապարտելի:

Կշռադատման փուլ: Աշակերտներից յուրաքանչյուրը ստացավ մեկ փոքրիկ թուղթ՝ վրան գրված գումարման կամ հանման նշան: Գումարման նշանով թուղթ ստացողները պետք է պաշտպանեն ու արդարացնեն հերոսների արարքները, իսկ հանման նշանով թուղթ ստացողները՝ մեղադրեն: Ազատ քննարկումներից հետո տրվեցին խորհուրդներ

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ճպուռին և մրջյունին: Ճպուռը պետք է մտածի վաղվա օրվա մասին, այլևս ծուլություն չանի, լինի աշխատասեր, ժամանակ գտնի աշխատելու համար: Մրջյունը պետք է լինի ձեռնբաց, անշահախնդիր, հոգատար, օգնի ընկերոջը: Այս ամենը օգնեց ստուգել աշակերտների յուրացրածը, ինչպես նաև բացահայտել թերի կողմերը, խթանել երևակայությունն ու ստեղծագործական մտածողությունը: Ամփոփման դասը հնարավորություն տվեց աշակերտներին՝ արժևորել մարդկային արժանապատվությունը և մարդու իրավունքները, արժևորել արդարությունը, հավասարությունը, լինել հանդուրժող, հարգել դիմացինին, կարեկցել, համագործակցել, լսել դիմացինի կարծիքը, քննադատել վատ արարքը: Ժամանակակից տեղեկատվական քաղաքակրթության դարաշրջանում անհրաժեշտ է աշխատել այնպիսի պայմաններում, երբ գիտելիքներն արագ են հնանում , քան հասցնում են յուրացվել սովորողի կողմից, այդ պատճառով ստեղծագործ անհատի պատրաստման համար անհրաժեշտ են ուսուցման նոր մեթոդներ և ձևեր, որոնք ի վիճակի կլինեն անընդհատ զարգանալ ու կատարելագործվել: Ուսուցչի նպատակը սովորողի անհատական գործունեության զարգացումն է, մարդուն այնպես դաստիարակելը , որ համապատասխանի ժամանակակից պահանջներին: Այդ պատճառով էլ ուսումն այպես պետք է կազմակերպել, որ յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա զարգանալ և բացահայտվել որպես ստեղծագործ անհատ: Այս ամենը պահանջում է ժամանակակից մոտեցում ուսումնական գործունեության կազմակերպմանը , աշխատանքի նոր ձևերի և մեթոդների որոնմանը:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Եզրակացություն

Հետազոտությունը ցույց է տալիս, որ եթե մենք ցանկանում ենք աշակերտների գիտելիքները լինեն մնայուն, ապա ուսուցանվող նյութը պետք է մատուցենք այնպես, որ հետաքրքրի աշակերտներին, իրենք ձգտել լինել ստեղծագործ-հետազոտողի դերում, իսկ այդ հարցում մեզ օգնության են գալիս փոխներգործուն մեթոդները և խաղային տեխնոլոգիաները: Փոխներգործուն մեթոդներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար, ինչպես նաև նպաստում են աշակերտների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների ձևավորմանը: Միևնույն ժամանակ պետք է ընտրվի դասավանդման այնպիսի մեթոդաբանություն, որտեղ հարգված կլինեն ժողովրդավարական արժեքները, որի արդյունքում աշակերտները կարժևորեն մարդկային արժանապատվությունը, արդարությունը, կսովորեն հարգել դիմացինին, կարեկցել, լսել և համագործակցել միմյանց հետ: Պետք է ապահովել նաև կրթական այնպիսի միջավայր, որտեղ աշակերտները կարողանան ներկայացնել իրենց հույզերը, գաղափարները, սովորեն գնահատել մշակույթը՝ որպես մարդկային զգացմունքների դրսևորման միջոց, ապրել հպարտության և բարձր ինքնագնահատման զգացումներ:

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Օգտագործված գրականության ցանկ

1) Յու. Կ. Բաբանսկի «Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում»:
2) Ս. Տ. Մասլով
3) Գյուլամիրյան Ջ.Հ. «Մայրենիի ուսուցման մեթոդիկա»
4) Ս. Խաչատրյան «Դասավանդման մեթոդների կատարելագործում»
5) Գյուլամիրյան Ջ.Հ «Խմբային աշխատանքը որպես ուսուցման ստեղծագործական-հետազոտական ուղղվածության ապահովման միջոց»
6) Մակարենկո
7) Վ. Ս. Լեդնև

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և

կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով:

Ն. Ժուրավլյովա

Որպես արժեքային համակարգի ձևավորման միջավայրային գործոններ, առանձնացվում է ընտանիքը, դպրոցը, աշխատանքային կոլեկտիվը, որոնք «սոցիալական փորձի միջնորդ» են, որոնցում անձը հաղորդակցվում է նորմերի և արժեքների համակարգի հետ:

Գ.Մ.Անդրևա

Ընտանիքում և դպրոցում անձի ձևավորման գործընթացը իրականացվում է նախևառաջ «տեղեկատվական ուղիով. Անձին ուրիշների կողմից ստացվող համապատասխան տեղեկություն փոխանցելու միջոցով»:

Վ.Աֆանասև

Արժեքային կողմնորոշումները անձի դիրքորոշումներն են նյութական և հոգևոր մշակույթի արժեքների նատմամբ:

Ա. Զդրավոմիսլով